ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Վ1Պ-ՄԱՊՁԲ 21/7

ք. Վանաձոր " 12 " 03 2021թ.

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը , ի դեմս տնօրեն՝ Ս.Բալայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Մաքս Օիլ ՍՊԸ-ն , այսուհետև՝ Մատակարար, ի դեմս տնօրեն Կ.Մելքոնյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Պատվիրատուին մատակարարել վառելիք /այսուհետև՝ Ապրանք/ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա դիմաց:

1.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/ կամ Մատակարարին հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Առանց Ապրանքի դիմաց վճարելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը պահանջելով հատուցել իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը չի համապատասխանում անհրաժեշտ որակին կամ խախտվել է Ապրանքի Մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.2 Չընդունել Ապրանքը, եթե անցած է նրա պիտանելության ընդհանուր ժամկետի առնվազն 2/3-ը:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Ստուգել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Ապրանքի որակը և արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնել Մատակարարին:

2.2.2 Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս Ապրանքի դիմաց վճարման ենթակա գումարը:

2.3 **Մատակարարն իրավունք ունի՝**

2.3.1 Մինչև Ապրանքը պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագրի կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել հատուցելու պատճառված վնասները, բացառությամբ սույնպայմանագրի 2.1.1 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ապրանքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին նախօրոք գրավոր տեղեկացնելով Կատարողին և հատուցել հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.4 **Մատակարարը պարտավոր է՝**

/ Մատակարարի կողմից ապրանքի մատակարարումը ապահովել իր ուժերով և միջոցներով՝ գատվերից հետո 3 օրվա ընթացքում, իսկ բացառիկ դեպքերում, ներկայացված պահանջն ստանալու օրից 1 օրացույցային օրվա ընթացքում :

2.4.2 Սույն պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուին վճարել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 %-ի չափով:

2.4.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրի չհամապատասխանող և ժամկետանց Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուին վճարել տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.05 %-ի չափով: Ընդ որում սույն պայմանագրի 2.4.3 և 2.4.4 կետերով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են Պատվիրատուի կողմից Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ և ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատակարարի կողմից մատակարարված Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հանձման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Մատակարարի մատակարարած Ապրանքի գինը կազմում է 571500 /հինգ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր / << դրամ: Գինը ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ապրանքի գինը կայուն է և Պատվիրատուն իրավունք չունի պահանջել նվազեցնելու, իսկ Մատակարարը ավելացնելու այդ գինը:

4.3 Պատվիրատուն մատակարարած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մտակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Ապրանքն ստանալու օրվանից 25 բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում Ապրանքի որակի պահպանման համար:

5.2 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Ապրանքն ընդունելու դեպքում գումարի վճարման համար:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ- ՄԱԺՈՐ/

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմնագիրն ստորագրվում և վավերացվում է մրցույթը կայանալուց հետո օրենքով սահմանված կարգով: Գործում է մինչեւ 25.12.21թ.

7.2 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարելի փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4 Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ու լրացումները կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.7 Սույն պայմանագրի հավելված 1-ը հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա>> ՓԲԸ	<<Մաքս Օիլ >> ՍՊԸ
ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,	ք.Երևան, Տպագրիչների 8
<Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ	<Ամերիաբանկ >ՓԲԸ ք.Երևան
Հ/Հ 247170009663	Հ/Հ 1570026452480100
ՀՎՀՀ 06907013	ՀՎՀՀ 02662703
Տնօրեն՝ Ս. Բալայան	Տնօրեն՝ Ա.Մելքոնյան

Հավելված 1

,Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկաե ՊՓԲԸ –ին 2021 թ-ի III-XII ամիսներին անհրաժեշտ վառելիքի ցանկ

1.Գնման առարկա է հանդիսանում ,Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա ԵՊՓԲԸ-ի կարիքների համար վառելիքի մատակարարումը:

2. Մատակարարումը պետք է իրականացվի համաձայն հետեւյալ բնութագրի

ՀՀ	Ապրանքի անվանումը	Ռեգուլյար բենզին
1.	Հիմնական տեխնիկական ցուցանիշները	Օկտանային թիվը՝ 91
		Խտությունը՝ 15 ^{0}C-ում ոչ ավելի 775 կգ/մ^3, բենզոլի ծավալային մասը՝ 1 %
2	Ստանդարտը	Տեխնիկական կանոնակարգ (ՀՀ Կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի թիվ 894-Ն որոշում)
3.	Պայմանական նշանները	«Վախենում է կրակից»
4.	Տեղափոխման անվտանգությունը	Հրավտանգ
5.	Անվտանգությունը՝ շրջակա միջավայրի նկատմամբ	Կապարի պարունակությունը՝ ոչ ավելի 0.005 գ/լ
6.	Տեսքը	Մաքուր և պարզ
7.	Քանակը	1500 / Կտրոնային/
8.	Չափման միավորը	լիտր

Մատակարարման/գնման/ժամանակացույց

Գնման ժամ-ց	Բենզին	Գին	Գումար	Ընդունողի պաշտոն
III -XII	1500լ	381	571500	Լիազորված անձ
Ընդամենը	1500 լ		571500	Լիազորված անձ

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա>> ՓԲԸ

ք.Վանաձոր, Մյասնիկյան 17 ,

<Ինեկոբանկ >Վանաձոր մ/ղ

ՀՀ 247170009663

ՀՎՀՀ 06907013

Տնօրեն՝ Ս. Բալայան

ՎԱՃԱՌՈՂ

<<Մաքս Օիլ >> ՍՊԸ

ք.Երևան, Տպագրիչների 8

<Ամերիաբանկ >ՓԲԸ ք.Երևան

ՀՀ 1570026452480100

ՀՎՀՀ 02662703

Տնօրեն՝ Պ.Մելքոնյան